ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1947, № 5 *Общественные науки*

Վ. Թոքունի

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՀԱՐՑՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Ըստ Լենինի ուսմունքի[1]

Ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում կապիտալիզմի զարգացման ուղիների հարցը գյուղատնտեսության մեջ սերտորեն կապված է ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունների լիկվիդացիայի հարցի հետ, ուրեմն և այն էպոխայի, երբ նախ Ռուսաստանում, ապա Անդրկովկասում կենսագործվեց գյուղացիական ռեֆորմը, այսինքն՝ անցյալ դարի 60-ական թվականների հետ։

Քանի որ այդ հարցն Անդրկովկասից առաջ ծագել է Ռուսաստանում, և դրա շուրջն սկսված ու ծավալված պայքարը, դրա դրվածքն ու լուծումը վճռական նշանակություն է ունեցել Անդրկովկասի համար, բնականաբար անհրաժեշտ է նախ քննել այդ հարցի էությունը, պարզաբանել դրա կարևորությունը Ռուսաստանի համար, ապա միայն անցնել Անդրկովկասին։

Գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացման ուղիների շուրջը սուր և տևական պայքար ծավալվեց մասնավորապես ճորտատիրության վերացման էպոխայում, որովհետև, ինչպես Լենինն է նշում, օբյեկտիվորեն հնարավոր էր երկու ուղի, որոնցից մեկի համար պայքարում էր գյուղացիությունը, իսկ մյուսի համար՝ կալվածատիրությունը։ Այդ պատճառով էլ հրապարակ էր իջել այն խնդիրը, թե որ ուղիով էր գնալու Ռուսաստանը. այն ուղիով, որի համար տարերայնորեն ու անկազմակերպ, բայց համառորեն պայքարում էր գյուղացիական մասսան, թե՞ այն ուղիով, որով ցանկանում էին տանել երկիրը ռուսական կալվածատերերը։

Գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացման այդ երկու ուղու և դրա շուրջը ծավալված պայքարի էության մասին Լենինը գրում է.

«Վերցրեք ճորտատիրական իրավունքի անկման էպոխան։ Պայքար էր տեղի ունենում ռեֆորմի անցկացման եղանակի համար կալվածատերերի և գյուղացիների միջև։ Ե՛վ մեկը, և՛ մյուսը պաշտպանում էին բուրժուական տնտեսական զարգացման պայմանները (չգիտակցելով այն), բայց առաջինները՝ այնպիսի զարգացման, որն ապահովում է կալվածատիրական տնտեսությունների, կալվածատիրական եկամուտների, շահագործման կալվածատիրական ստրկացուցիչ (кабальный) եղանակների առավելագույն պահպանումը։ Երկրորդները՝ այնպիսի զարգացման շահերը, որը կապահովեր գյուղացիության բարեկեցությունը մեծագույն չափերով, ինչքան այդ ընդհանրապես հնարավոր է կուլտուրայի տվյալ մակարդակի ժամանակ,

[1] Զեկուցվել է 1947 թ. հունվարի 27-ին, Վ. Մ. Մոլոտովի անվան երևանի Պետական համալսարանի XXI գիտական սեսիայում՝ նվիրված Վ. Ի. Լենինի մահվան 23-ամյակին։

կալվածատիրական լատիֆունդիաների ոչնչացումը, շահագործման բոլոր ճորտատիրական և ստրկացուցիչ (кабальный) եղանակների ոչնչացումը, ազատ գյուղացիական հողատիրության լայնացումը»։

Ապա Լենինն ավելացնում է. «Ինքնին հասկանալի է, որ երկրորդ ելքի դեպքում կապիտալիզմի զարգացումը և արտադրողական ուժերի զարգացումն ավելի լայն և ավելի արագ կլիներ, քան գյուղացիական ռեֆորմի կալվածատիրական ելքի դեպքում»։[1]

Եվ այդ, նշում է Լենինը, այն պատճառով, որ երկրորդ ելքը ռևոլուցիայի ուղին է, իսկ առաջինը ռեֆորմի. «Ճորտատիրության մնացորդները կարող են ոչնչանալ և կալվածատիրական լատիֆունդիաների վերափոխման միջոցով, և՛ կալվածատիրական լատիֆունդիաների ոչնչացման միջոցով, այսինքն ռեֆորմի միջոցով, և ռևոլուցիայի միջոցով»։

Գյուղատնտեսության կապիտալիստական զարգացման առաջին ուղին Լենինն անվանում է պրուսական կամ կալվածատիրական, իսկ երկրորդը՝ ամերիկական կամ գյուղացիական։[2]

1861 թ. փետրվարի 19-ին ռուսական կալվածատերերին հաջողվեց խուսափել ճորտատիրության ոչնչացման ռևոլուցիոն ուղուց, մնալով գյուղացիական ապստամբությունները և ռեֆորմի միջոցով Ռուսաստանի գյուղատնտեսության կապիտալիստական վերափոխման գլուխ կանգնել։

Հայտնի է, որ գյուղացիական ռեֆորմի կենսագործման հարցում ժամանակի տարաձայնություններ կային ոչ միայն կալվածատերերի և բուրժուազիայի, այլև հենց կալվածատիրության զանազան շերտերի միջև։ Բայց անկախ այդ բոլորից՝ կապիտալիզմի պրուսական կամ ռեֆորմի ուղին իր ամբողջությամբ համապատասխանում էր հասարակական այդ վերնաշերտերի շահերին և հիմնական միջոց էր նրանց ձեռքին ընդդեմ ամերիկական կամ ռևոլուցիոն ուղու։

«Ճորտատիրության կողմնակիցների (крепостники) և լիբերալների ախրահոչակ պայքարը,—գրում է Լենինը,—որ այնքան ուռճրած և պճնազարդված է մեր լիբերալ և լիբերալ-նարոդնիկական պատմաբանների կողմից, պայքար էր իշխող դասակարգերի ներսում, մեծ մասամբ կալվածատերերի ներսում, պայքար բացառապես գիջումների չափի և ձևի համար։ Լիբերալները նույնպես, ինչպես որ ճորտատիրության կողմնակիցները կանգնած էին կալվածատերերի սեփականությունը և իշխանությունը ճանաչելու հողի վրա, գայրույթով դատապարտելով այդ սեփականությունը ոչնչացնելու, այդ իշխանությունը լիովին տապալելու ամեն տեսակի ռևոլուցիոն մտքերը»։[3]

Իսկ այս ամենից, նշում է Լենինը, հետևում է այն, որ 1861 թվականից սկսած Ռուսաստանը կապիտալիստական դարձնելու երկու տենդենց գոյություն ունի՝ լիբերալ-բուրժուական և ռևոլուցիոն-դեմոկրատական։ «1860-ական թվականների լիբերալները և Չերնիշևսկին այդ երկու պատմական տենդենցի, երկու պատմական ուժերի ներկայացուցիչներն են, ուժեր, որոնք այն ժամանակից սկսած ու մինչև մեր ժամանակները որոշում են նոր Ռուսաստանի համար մղվող պայքարի ելքը»։[4]

[1] Ленин, Соч., т. XI, изд. 2-ое, стр. 349.
[2] Նույն տեղում, էջ 348։
[3] Ленин, Соч., т. XV, изд. 2-ое, стр. 143.
[4] Նույն տեղում, էջ 143—144։

Լիբերալների «պայքարի» ելանակի և բովանդակության մասին Լենինը գրում է.

«Լիբերալները ցանկանում էին «ազատագրել» Ռուսաստանը «վերևից», չխորտակելով ոչ ցարի միապետությունը, ոչ էլ կալվածատերերի հողատիրությունը և իշխանությունը, նրանց միայն գրգելով, որ «զիջումներ» անեն ժամանակի ոգուն։ Լիբերալներն էին և մնում են բուրժուազիայի իդեոլոգներ, որը չի կարող հաշտվել ճորտատիրության հետ, բայց որը վախենում է ռեոլուցիայից, վախենում է մասսաների շարժումից, մի շարժում, որն ընդունակ է միապետությունը տապալելու և կալվածատերերի իշխանությունը ոչնչացնելու։ Այդ պատճառով լիբերալները սահմանափակվում են «ռեֆորմի համար մղվող պայքարով», «իրավունքների համար մղվող պայքարով», այսինքն՝ իշխանության բաժանումով ճորտատիրության կողմնակիցների և բուրժուազիայի միջև»։[1]

Ի՞նչ էին ցանկանում Չերնիշևսկին և իր համախոհները, գյուղացիության շահերի այդ պաշտպանները, ինչի՞ համար էին պայքարում նրանք։ Չերնիշևսկին,—ասում է Լենինը,—ուտոպիստ-սոցիալիստ էր և երազում էր «հին, կիսաֆեոդալական, գյուղացիական համայնքի միջոցով սոցիալիզմին անցնելու մասին». նա «չէր տեսնում և անցյալ դարի 60-ական թվականներին չէր կարող տեսնել, որ միայն կապիտալիզմի և պրոլետարիատի զարգացումն է ընդունակ նյութական պայմաններ և հասարակական ուժ ստեղծել սոցիալիզմի իրականացման համար»։ Բայց, շարունակում է Լենինը, Չերնիշևսկին նաև ռեոլուցիոն դեմոկրատ էր և պաշտպանում էր գյուղացիական ռևոլուցիայի իդեան, բոլոր հին իշխանությունների տապալման համար մասսաների պայքարի իդեան, մերկացնելով ցարական ռեֆորմի ճորտատիրական բնույթը և այդ ռեֆորմը նախ գունազարդող, ապա փառաբանող լիբերալներին։

Ինչպես Չերնիշևսկու, այնպես էլ նրանից առաջ Գերցենի, և նրանից հետո ռևոլուցիոն նարոդնիկների և նրանց հետնորդների՝ ս.-ռ. և այլն ուտոպիստական-սոցիալիստական իդեաների և ծրագրերի ռեակցիոն էությունը նշելով և մերժելով, Լենինը միաժամանակ ընդգծում է նրանց ռեոլուցիոն «պայքարի օբեկտիվորեն պրոգրեսիվ, բուրժուա-դեմոկրատական էությունը, այն է՝ գյուղացիական կապիտալիզմի պաշտպանությունն ընդդեմ կալվածատիրականի։

«Գերցենը «սոցիալիզմ» էր տեսնում գյուղացիներին հողով ազատագրելու մեջ, համայնական հողատիրության մեջ, գյուղացիական «հողի իրավունքի» իդեայի մեջ»,—գրում է Լենինը և ապա ավելացնում. «Իրոք, Գերցենի այդ ուսմունքի՝ ինչպես և ամբողջ ռուսական նարոդնիկության մեջ—ընդհուպ մինչև այժմյան «սոցիալիստ-ռևոլուցիոներների» խունացած նարոդնիկությունը—ոչ մի գրաճ սոցիալիզմ չկա»։ Այդ բոլոր ֆրազների տակ, բացատրում է Լենինը, ըստ էության հանդես է գալիս «բուրժուական գյուղացիական դեմոկրատիայի ռևոլուցիոնությունը Ռուսաստանում»։[3]

Լենինը շարունակ նշում է, որ հարկավոր է պարզ ու որոշ կերպով տեսնել և տարբերել «բուրժուական գյուղացիական դեմոկրատիայի» այդ

[1] Ленин, Соч., т. XV, изд. 2-ое, стр. 144.

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում, էջ 466։

երկու դեմքը բուրժուական էությունը և սոցիալիստական կեղևը։ Վերջինը ռեակցիոն է և ուտոպիստական, իսկ առաջինը դեմոկրատական ու պրոգրեսիվ, որովհետև ուղղված է ճորտատիրական ամբողջ սիստեմի դեմ և կապիտալիզմի համար ուղի հարթելու ամենաարժատական եղանակն է։

Այսպես, օրինակ, նկատի ունենալով «խունացած նարոդնիկության» ներկայացուցիչներին, Լենինը գրում է.

«Երբ ս.-ռ. խոսում է հողից օգտվելու հավասարության մասին, հողերի ոցիալիզացիայի մասին և այլն, ապա ս.-ռ. տնտեսական տեսակետից անհեթեթություն է ասում, ս.-ռ. անգրագիտություն է երևան բերում տնտեսական գիտության և կապիտալիզմի զարգացման թեորիայի մեջ։ Բայց այդ ֆրազների տակ, այդ երազանքների տակ թաքնված է վերին աստիճանի կենդանի, ռեալ բովանդակություն, — միայն ամենևին ոչ սոցիալիստական, այլ զուտ բուրժուական, այն է՝ կապիտալիզմի համար հողի մաքրում, հողի նկատմամբ ամեն տեսակի միջնադարյան և դասային պատնեշների ոչնչացում, կապիտալիզմի համար ազատ վարձակալության ստեղծում»։[1]

Գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացման վերևում նշված երկու տիպի հետ, հասկանալի է, անխզելիորեն կապված են դրանցով շահագրգռված հասարակական շերտերի քաղաքական տիրապետության ձևերը։ Այդ մասին Լենինը գրում է.

«Կամ պրուսական տիպի էվոլուցիա՝ ճորտատեր-կալվածատերը յունկեր է դառնում։ Տասնամյակով ամրացված է կալվածատիրական իշխանությունը պետության մեջ։ Միապետություն։ «Պառլամենտական ձևերով զուգված (обшитый) ռազմական բռնակալություն»։ ...Կամ ամերիկական տիպի էվոլուցիա։ Կալվածատիրական տնտեսության ոչնչացում։ Գյուղացին ազատ ֆերմեր է դառնում։ Ժողովրդապետություն։ Բուրժուա-դեմոկրատական կարգ»։[2]

Ի՞նչ դիրք պետք է բռնի պրոլետարիատը կապիտալիզմի այդ երկու տիպի հաղթանակի համար մղվող պայքարում, ելակետ ունենալով իր դասակարգային կովի հեռանկարները։

«Պարզ է,—նշում է Լենինը,—որ պրոլետարիատը պետք է իր բոլոր ուժերն ուղղի դեպի երկրորդ՝ուղու պաշտպանությունը։ Որովհետև միայն այդ ուղու հաղթական ավարտումից հետո պրոլետարիատը «կփրկվի այժմ անխուսափելիորեն իր վրա ընկած բուրժուա-դեմոկրատական խնդիրներից և ամբողջովին կնվիրվի իր սեփական, իսկապես դասակարգային, այսինքն՝ սոցիալիստական խնդիրներինը»։[3]

Ըստ այդմ էլ գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացման երկու ուղու համար պայքարող հասարակական ուժերը Լենինն այսպես է խմբավորում և այսպես է բնութագրում նրանց միացնող ու նրանց անջատող հարցերը.

«Ստոլիպինը և կադետները, ինքնակալությունը և բուրժուազիան, Նիկոլայ 2-ը և Գյոտե Ստրուվեն համամիտ են այն բանում, որ հարկավոր է կապիտալիստորեն «զտել» Ռուսաստանի հնացած ագրարային կար-

[1] Ленин, Соч., т. XII, изд. 2-ое, стр. 326.
[2] Ленин, Соч., т. XI, изд. 2-ое, стр. 188.
[3] Նույն տեղում, էջ 188—189.

գը՝ կալվածատիրական հողային սեփականություն պահպանելու միջոցով. նրանք տարամիտում են միայն այն բանում, թե ինչպես ավելի լավ պահեն այն և ինչքան պահեն։

Բանվորները և գյուղացիները, սոցիալ-դեմոկրատները և նարոդնիկները (աշխատավորականները, ժողովրդական սոցիալիստները, այդ թվում ս.-ռ.) համամիտ են այն բանում, որ հարկավոր է կապիտալիստորեն «գտել» Ռուսաստանի հնացած ագրարային կարգը՝ կալվածատիրական հողային սեփականության բռնի ոչնչացման միջոցով։ Նրանք տարամիտում են այն բանում, որ սոցիալ-դեմոկրատները հասկանում են արդի հասարակության մեջ ամեն տեսակի, թեկուզ և ամենաարմատական ագրարային ռևոլուցիայի կապիտալիստական բնույթը, ե՛ մունիցիպալիզացիայի, ե՛ նացիոնալիզացիայի, և սոցիալիզացիայի, ե՛ բաժանման (раздел), իսկ նարոդնիկներն այդ չեն հասկանում, իրենց կողմից մղվող պայքարը գյուղացիական-բուրժուական ագրարային էվոլուցիայի համար ընդդեմ կալվածատիրական-բուրժուական էվոլուցիայի դուղելով քաղքենիական-ուտոպիստական ֆրազներով հավասարության մասին»[1]։

Գյուղացիական շարժման ու պայքարի դեմոկրատական և հակաճորտատիրական էությունը շեշտում է նաև ընկեր Ստալինը 1906 թվականին ագրարային հարցի մասին գրած իր հոդվածներում և նշում է հետևյալ էական հանգամանքը. «Գյուղացիները մի անգամ ընդմիշտ պետք է յուրացնեն այն միտքը, որ կալվածատերերի հետ հարկավոր է ոչ թե սակարկություն անել, այլ պայքար մղել։ Հարկավոր է ճորտատիրության լուծը ոչ թե կարկատել, այլ ջախջախել այն»։

Ապա ընկեր Ստալինը գյուղացիական շարժման բնույթի, նպատակի և դրա կենսագործման միջոցների մասին իր դիտողությունները տեսեալ ձևով է ամփոփում. «Այսպես ուրեմն, գյուղի այսօրվա շարժումը դա գյուղացիների դեմոկրատական շարժումն է։ Այդ շարժման նպատակը՝ ճորտատիրության մնացորդների ոչնչացումն է։ Իսկ այդ մնացորդների ոչնչացման համար անհրաժեշտ է կալվածատերերի և դանձարանի ամբողջ հողի կոնֆիսկացիան»։

Գյուղացիության պայքարին հակառակ՝ 1861 թ. ռեֆորմից սկսած կալվածատիրական-բուրժուական շերտերը ամեն ինչ թափել և թափում էին, որ պրուսական ուղիով կատարվող ռուսական հնացած ագրարային կարգի «գտումը» կայուն հիմք ստանա և դրա շնորհիվ ամրապնդվի ցարական միապետական-բուրժուական կարգը՝ կալվածատիրոջ և բուրժուազիայի դաշինքի ձևով։ Այդ ուղղությամբ ցարիզմի վերջին փորձն էր Ստոլիպինի ագրարային քաղաքականությունը ուղղված ամերիկական կամ գյուղացիական ուղիով Ռուսաստանի ագրարային կարգը «գտելուն» դեմ։

Թեև, նշում է 1908 թ. Լենինը, ռևոլուցիայի պարտությունը և Ստոլիպինյան ռեակցիայի հաղթանակը որոշ շանսեր ստեղծեցին Ռուսաստանի բուրժուական զարգացման պրուսական ուղու հաղողության համար, բայց հարցը լուծված համարել չի կարելի և պայքարը պետք է շարունակել հանուն ամերիկական ուղու հաղթանակի։

---

[1] *Ленин*. Соч., т. XII. изд. 2-ое, стр. 192—193.

[2] *И. В. Сталин*. Соч., т. 1, стр. 317.

«Ճորտատերերի ցարը գոչեց անպարտիական գյուղացիներին, որ ինքը Թույլ չի տա հարկագիր օտարացում,—գրում է Լենինը և ավելացնում.— «Թող բանվոր դասակարգն ի պատասխան դրա գոչի միլիոնավոր «անպարտիական» գյուղացիներին, որ ինքը նրանց հրավիրում է սոսսսայական պայքարի հանուն ցարիզմի տապալման և կալվածատիրական հողի բռնագրավման»[1]

Այսպիսով, կես դարից ավելի տևող այդ պայքարի այս կամ այն ձևով վերջնական լուծում ստանալը Լենինը կապում է այն բանի հետ, թե պրոլետարիատն ինչպիսի հաջողությամբ կկարողանա գլխավորել գյուղացիության պայքարն ընդդեմ կալվածատիրական բուրժուական ռեակցիայի, հանուն բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայի, որը կլուծի թե ցարիզմի տապալման և թե հողի բռնագրավման հարցերը Ռուսաստանում, հարցեր, որոնք իրար հետ սերտորեն կապված են հանդես եկել Ռուսաստանի վերջին 50—60 տարվա պատմության մեջ։

Գյուղացիական ռեֆորմի էպոխայից սկսած՝ Ռուսաստանի տնտեսական կյանքի պատմությունն ակներևորեն մի բան է ցույց տալիս, գրում է Լենինը. «Գյուղացիական մասսայի շահերը հենց ամենալրիվ, ամենաարագ և ամենալայն «բուրժուական հասարակության զարգացման» շահերն են, «ամերիկական» զարգացման, այլ ոչ թե «պրուսական»։ Հենց այդ պատճառով էլ Ռուսաստանում անկասկածելի իրողություն է հետևյալը. «Բուրժուական ռևոլուցիան բուրժուազիայի ղեկավարությամբ կարող է լինել միայն չավարտված ռևոլուցիա (այսինքն՝ ոչ թե ռևոլուցիա, այլ, խիստ ասած, ռեֆորմ)։ Նա կարող է իսկական ռևոլուցիա լինել միայն պրոլետարիատի և գյուղացիության ղեկավարությամբ»։

Իսկ այդպիսի ռևոլուցիայի արդյունքը կլինի՝ կապիտալիստական հիմքի վրա արտադրողական ուժերի ամենից ավելի արագ և ազատ զարգացում, բանվորական և գյուղացիական մասսայի ամենալավ դրություն, ինչ որ միայն ընդհանրապես հնարավոր է ապրանքային արտադրության պայմաններում. այստեղից էլ կբխի այն, որ կստեղծվեն ամենանպաստավոր պայմաններ, որ բանվոր դասակարգը հետագայում իրականացնի սոցիալիստական վերակառուցման իր իսկական և արմատական խնդիրը»[2]— գրում էր Լենինը դեռևս 1907 թվականին, հանճարեղ խորաթափանցությամբ նախատեսելով և գծագրելով ռուսական ռևոլուցիայի ապագա ուղին, նշելով նրա կենսագործման պայմանները և հաջորդական էտապները, նրա իրականացման համար պայքարող դասակարգային ուժերը և առաջ քաշելով այն հիմնական հարցը, որը հանդիսանում էր Ռուսաստանի կապիտալիստական զարգացման ու բուրժուական ռևոլուցիայի առանցքային պրոբլեմը, կամ մեխը, ինչպես արտահայտվում էր Լենինը, այսինքն՝ ճորտատիրության մնացորդների «դուրսը» Ռուսաստանում «ամերիկական» կամ ռևոլուցիոն ուղիով։

Այսպես ահա, մենք փորձեցինք ըստ Լենինի ուսմունքի համառոտակի քննել գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացման ուղիների

---

[1] *Ленин*, Соч., т. XII, изд. 2-ое, стр. 157
[2] *Ленин*, Соч., т. XI, изд. 2-ое, стр. 189.
[3] *Ленин*, Соч., т. III, изд. 2-ое, стр. 13.

հարցի էությունը և պարզել նրա նշանակությունը Ռուսաստանի համար՝ սկսած գյուղացիական ռեֆորմի էպոխայից մինչև 1905—1907 թ. թ. ռևոլյուցիայի շրջանը։

Այժմ անցնենք այդ հարցի քննությանը Անդրկովկասում, սահմանափակվելով XIX դարի երկրորդ կեսի շրջանակներով։

* * *

Անդրկովկասի գաղութային, տնտեսական ու քաղաքականապես հետամնաց պայմաններում գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացման ուղիների հարցը համեմատաբար քիչ ուշադրության է արժանացել։ Նրա նշանակությունը երկրի բուժական զարգացման համար քիչ է գիտակցվել։ Բայց գիտակցաբար թե անգիտակցաբար, այստեղ էլ այդ ուղիների համար մղվող պայքարում հասարակական ուժերը խմբավորվել են նույն ձևով, ինչ որ Ռուսաստանում, նրանց պայքարի էությունն ու իմաստը նույնն է եղել, ինչ որ երկրի կենտրոնում։ Տարբերությունները զուտ քանակական են և պայմանավորված տեղական կյանքի առանձնահատկություններով. ամենից առաջ այն բանով, որ, բացի Վրաստանից, Անդրկովկասում, մասնավորապես նրա հայաբնակ շրջաններում կալվածատիրական-ճորտատիրական տնտեսության տեսակարար կշիռն ավելի փոքր էր, քան Ռուսաստանում, իսկ կապիտալիստական ուղիով զարգանալու նրա հնարավորությունները շատ ավելի քիչ էին. ապա նաև այն բանով, որ գյուղացիական ռեֆորմի շրջանում և դրանից հետո ժողովրդական մասսաների պայքարը, դարձյալ բացի Վրաստանից, այնպիսի մասսայական և սուր բնույթ չընդունեց, ինչպես Ռուսաստանում և լայն դեմոկրատական-ռևոլյուցիոն շարժման համար հող չստեղծեց։

Այդ պատճառով էլ հայ փոքրաթիվ կալվածատիրական շերտերում գրեթե երևան չեկավ պրուսական տիպի կապիտալիզմի պաշտպանության որևէ ծրագիր, նրանց մեջ գերիշխում էր մինչռեֆորմյան հարաբերությունների պահպանման միտումը և նրանց շահերի թարգման հայ կղերականռեակցիոն մասուլը բավականացավ միայն ցարիզմի հակադյուղացիական կիսաճորտատիրական միջոցառումների ջատագովությամբ։ Իսկ հայ բուրժուական դանագան հոսանքների մամուլը՝ սկսած պահպանողական «Մեղու»-ից մինչև լիբերալ «Մշակ»-ը՝ կամ անվերապահորեն պաշտպանեց ցարական գյուղացիական ռեֆորմին, այն հարցն առաջ քաշելով, որ դրա բոլոր սկզբունքները տարածվեն նաև Անդրկովկասի վրա, կամ երբեմն էլ ռուսական լիբերալների նման քննադատեց ռեֆորմի այս կամ այն մասնակի թերությունը, սակայն թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում անգամ պրուսական տիպի կապիտալիզմի նշանակությունը հասկանալու և կենսագործումը պաշտպանելու մեջ երևան չբերելով ոչ առանձին շահագրգռություն, ոչ էլ հատուկ եռանդ, ասես թե այդ հարցը կապիտալիզմի զարգացման ընդհանուր պրոբլեմի տեսակետից կարևորություն չէր ներկայացնում Անդրկովկասի պայմաններում։

Գյուղացիական շահերի վճռական պաշտպանությամբ 1862 թ. հանդես եկավ հայ ռևոլյուցիոն-դեմոկրատական հոսանքի անվանի առաջնորդը՝ Միքայել Նալբանդյանը և Գերցենի հետևողությամբ առաջ քաշեց հողը

ժողովրդին տալու մի ծրագիր, որի էությունը հենց ամերիկական տիպի կապիտալիստական զարգացմանն էր հանգում։

Ի-ակ Անդրկովկասի գյուղացիական ռեֆորմի շրջանում (1864—1870 թվերին) ժողովրդական մասսաների շահերի պաշտպանությունը հայ մամուլում և գրականության մեջ արձագանք չգտավ։ Միայն 80-ական թվականների սկզբից՝ կալվածատիրական հողի հետգնման հարցի քննության կապակցությամբ՝ հայ նարոդնիկական ինտելիգենցիայի ներկայացուցիչները փորձեցին պաշտպան կանգնել գյուղացիությանն ընդդեմ կալվածատերերի, բայց այդ կատարվեց ընդհանուր առմամբ լիբերալ նարոդնիկական դիրքերից և նրանց ծրագրերն, բա էության, չէին ուղղված կապիտալիզմի զարգացման կալվածատիրական տիպի դեմ, այլ միայն հետամուտ էին դրա «թերությունները» վերացնելու նպատակին։ Հենց այդ պատճառով էլ գյուղացու շահերի պաշտպանության այդ խաղաղ ու լեգալ պրոպագանդան, չնայած իր դեմոկրատական գծերին, ժողովրդական պահանջների կենսագործմանը նպաստելու տեսակետից մեաց լիովին անպտուղ։

Ելակետ ունենալով վերևի ընդհանուր դիտողությունները անցնենք հայ հասարակական տարբեր հոսանքների հայացքների քննությանը մեզ տյուտեղ հետաքրքրող հարցի նկատմամբ։

*

Թեև գյուղացիական ռեֆորմի նախապատրաստման և կենսագործման տարիներում հայ ռեակցիոն-կղերական հոսանքը մի քանի օրգաններ ուներ, բայց հենց նա է, որ ամենից քիչ է զբաղվել այդ հարցով, քանի որ նրա համար ամեն ինչ լուծված էր համարվում ցարական համապատասխան օրենքներով, որոնց կույր պաշտպանն էր նա։ Այսպես, օրինակ, այդ հոսանքի օրգաններից մեկը՝ Մոսկվայում հրատարակվող «Համբավաբեր Ռուսիոյ»-ն 1861 թ. օգոստոսին անդրադառնալով գյուղացիական ռեֆորմի կենսագործման ընթացքին, բավականանում է միայն այն հանգամանքը նշելով, որ դեռևս շարունակվում են Ռուսաստանում «ուուոաՀինեռի «անկարգությունները», որոնք «ծագեցան այլ և այլ գավառներուն», ապա ավելացնում է, որ դրանք «մեծ ուշադրության արժանի չեն, որովհետև ոչ այլ ինչ են, եթե ոչ չնչին դիպվածներ, ուր ծառաները ցույց են տալիս անհնազանդություն յուրյանց կալվածատյարց»։[1]

Ուրիշ ոչինչ։ Հայ կղերական-ռեակցիոն մամուլի ողջ հետաքրքրությունը գյուղացիական ռեֆորմով, նրա շուրջը ծավալված դասակարգային պայքարով սրանով սպառվում է։ Նույն հոսանքի մյուս օրգանները երևան են բերում ավելի խորամտություն. նրանք կամ բավականանում են գյուղացիական ռեֆորմին վերաբերող պաշտոնական դոկումենտների տպագրությամբ, կամ ուղղակի անտեսում են այդ հարցը, լռում այդ մասին և, իբրև «բարեխնամ» պետության խոնարհ հպատակներ, ընդունում ի գեկավարություն այն ամենը, ինչ որ բխում էր ցարական կառավարության օրենքներից։

Իհարկե, պատկերն այս կամ այն չափով փոխվում է։ երբ անցնում ենք մեր մյուս հասարակական հոսանքներին և նրանց մամուլին։

Սկսենք հայ պահպանողականներից։

[1] «Համբավաբեր Ռուսիոյ», 1861 թ., № 1, էջ 2։

* * *

1863 թ. մինչև 1886 թ. այսինքն իր գոյության ամբողջ շրջանում, հայ պահպանողականների օրգանը՝ Պետրոս Սիմոնյանի «Մեղուն»-ն գրեթե ոչ մի քննադատական խոսք չասաց ցարական ռեֆորմի բացերի մասին, չզբաղվեց նրա արդյունքների հարցով, գյուղացու անաեսության վրա նրա ունեցած ազդեցության խնդրով. հողի հեռացման հետ կապված հարցերն էլ դուրս մնացին նրա հետաքրքրության շրջանակից։ «Մեղուն»-ին միայն հետաքրքրեցին 60-ական թվականների բուրժուական ռեֆորմներն ընդհանուր առմամբ, որոնց մասին նա 1866 թ. գրում էր, թե «կարելի է ասել, որ Ռուսաստանի կառավարության վերջին տարիներումն իր ժողովուրդներին շնորհած իրավունքները սկիզբ են դնելու նոցա նոր կյանքի»։ Նշվում էր նաև, որ այդ ամենի արդյունքները թեև «կատարելապես չեն երևում, միայն այս դեռևս չպետք է հուսահատեցնե բարեմիտներին, որոնց պարտքը՝ է ներգործելը հոգուտ ժողովրդոց՝ այս բարձրագույն շնորհած իրավանց հիման վրա...»։[1]

Ուրեմն, ըստ «Մեղուն»-ի, բոլոր «բարեմիտները», այսինքն այդ ռեֆորմները Ռուսաստանի համար բարիք համարողները, պետք է աշխատեն «հոգուտ ժողովրդոց» միայն և միայն «բարձրագույն շնորհած իրավանց հիման վրա»։

Պարզ է, որ «Մեղուն»-ն ցարական ռեֆորմների, ուրեմն և այդ թվում գյուղացիական ռեֆորմի անվերապահ կողմնակիցներից է, իր ասած «բարեմիտներից»։ Այդ պատճառով էլ, երբ նա փորձ է անում հայկական իրականության մեջ էլ «նոր կյանքի» հիմքերն ամրապնդելու մասին հոգալ, այսինքն բուրժուական հարաբերությունների զարգացման համար հող ապահովել, ապա Հայաստանի գյուղատնտեսության համար առաջ է քաշում պրուսական տիպի կապիտալիզմի զարգացման մի ծրագիր՝ այդ հանձնարարելով իբրև միակ փրկություն հայ ժողովրդի համար։

Պարզվում է, ըստ «Մեղուն»-ի, որ, օրինակ, եթե ուզում ենք՝ «հայ ազգը պահպանվի, աճի և զարգանա Տաճկահայաստանում, պետք է մեր հարուստները աշխատեն հոդային կալվածքներ ձեռք բերեն Հայաստանում և սոցա մշակության վերա հոգան»։ «Մեղուն»-ն չի մոռանում հիշեցնել հայ հարուստներին, որ «ժամանակն էլ հարմար է այժմս (այսինքն 1880թ.։— Վ. Ս.) և ձեռնտու հող դնելու համար»։ Հողն էժան է, հայ հարուստները թող այժմ գնեն, իսկ հետո կվաճառեն հայ գյուղացիներին ավելի թանգ գնով։

Այսպես ուրեմն, հայ ժողովրդի ապագան Տաճկահայաստանում կախված էր հայ հարուստի քսակից, նրա հոյատեր դառնալուց և հայ գյուղացուն հող վաճառելուց։ «Մեղուն»-ի գծագրած այդ ապագան, դժվար չէ հասկանալ, հայ կապիտալիստ-եալվածատիրոջ իշխանությունը կհաստատեր հայ գյուղացու վրա, պրուսական կապիտալիզմի երկիր դարձնելով նրա հայրենիքը։

[1] «Մեղու Հայաստանի», 1866 թ., № 3, էջ 31—32։

[2] «Մեղու Հայաստանի», 1880 թ., № 15-ի առաջնորդող։

Կալվածատիրական իրավունքի սկզբունքին հավատարիմ լինելը «Մեղուս»-ն երևան է բերում և այն ժամանակ, երբ խոսում է ռուսահայ վանական գյուղացիների և Էջմիածնի փոխհարաբերությունների մասին։ Նրան սարսափեցնում է այն միաքն անգամ, որ ցարիզմը ծրագրում է Հայաստանի 1870 թ. գյուղացիական ռեֆորմը տարածել նաև Էջմիածնի կալվածների վրա։ Դուրս կգար, որ Էջմիածինը «ներկայացնում է իբրև մի սոսկական մուլքադար և ուրեմն ժամանակին ենթակա մուլքադարական օրենքին, այսինքն երբ գյուղացիք կամեցան, կարող են հողն ևս վանքից գնել»։

«Մեղուս»-ն հավատացած է, որ «բարեխնամ կառավարությունն» այդ չի անի և չի փոխի Էջմիածնի «գյուղերի նախնավանդ սովորությունները», այսինքն ֆեոդալական հարաբերությունները, որոնց գոյությունը վանական գյուղերում նա ժխտում է, պնդելով, որ վանքի և իր գյուղացիների միջև «հարաբերությունքը են բոլորովին հայրական և որդիական»։[1]

Այսպես ուրեմն, հայ պահպանողականները, երբ խոսքը վերաբերում է հայ եկեղեցու կալվածատիրական իրավունքներին, նույնիսկ գլանում են ցարական գյուղացիական ռեֆորմի «բարիքները» տարածել հայ վանական գյուղացիների վրա. պրուսական տիպի ռեֆորմն էլ այստեղ անընդունելի է համարվում, իսկ «նախնավանդ սովորություններին», այսինքն ֆեոդալական հարաբերությունների պահպանումը անհրաժեշտ։

Հայ պահպանողականների մյուս օրգանը «Նոր-Դար»-ը, որ սկսեց հրատարակվել 1884 թ., շարունակում և զարգացնում է «Մեղուս»-ի հայացքները պրուսական տիպի կապիտալիզմի մասին։ Անդրկովկասում արդեն բավականաչափ զարգացած կապիտալիստական հարաբերությունների պայմաններում՝ նա ոչ միայն հայ առևտրականին էր հրավիրում դեպի հողը, կոչ անում կազմակերպել խոշոր կապիտալիստական տնտեսություն գյուղատնտեսության զանազան ճյուղերում, այլև դուրս էր գալիս Էջմիածնի կալվածների «նախնավանդ սովորություններով» կազմակերպված տընտեսական սիստեմի դեմ և գնում կալվածատիրական-կապիտալիստական տնտեսության ձևին անցնելու անհրաժեշտության հարցը։ Այդ դեպքում մեր «վանքերը մեծապես կարող են նպաստել մեր երկրի կուլտուրական զարգացման, մեր երկրի բարոյական վերածնության և տնտեսական բարեկեցության գործին»։[2]

«Նոր-Դար»-ը նշում է, որ այդպիսի վանքերը մասնավորապես հնարավորություն կտանան գյուղացիության կյանքն ըստ ամենայնի դեկավարելու։

«Ներանք հարմարվելով ժամանակի հոգուն, -հավատացնում է «Նոր-Դար»-ը, բացի ժողովրդի բարոյական ու կրոնական պահանջներին բավականություն տալուց, կարող են և տնտեսագիտության օրինակ լինել ու միանգամայն ծառայել գյուղական ժողովրդին իբրև մտավոր կենտրոններ»։

Զարգացնելով և պարզաբանելով իր բաղձանքները, «Նոր-Դար»-ը առաջ է քաշում այն իդեան, որ վանական կալվածատիրությունը կանգնի գյուղի կապիտալիստական զարգացման գլուխ. «Եթե ս. Էջմիածինն աշխա-

[1] «Մեղու Հայաստանի», 1884 թ. № 31, Հ. Դ., Էջմիածնի գյուղերը։

[2] «Նոր-Դար», 1893 թ., № 205, «Մեր վանքերի տնտեսական դրության առթիվ» առաջնորդող։

տանքի կանոնավորություն և գյուղատնտեսական եվրոպական սարք ու կարգ մացնի վանքապատկան գյուղերը, որքան բարիք կլինի արած այդ գյուղերի բնակիչներին և որքան էլ կավելանան այդ կանոնավոր միջոցներով նրա արգյունքները»[1]

Բայց «Նոր-Դարձ»-ը միայն վանական կալվածատիրության պաշտպանի գերով չի բավականանում, միայն նրա կապիտալիստական զարգացման հոգսով չի բռնված, նա իր պաշտպանության տակ է առնում նաև հայ աշխարհիկ կալվածատերերի սեփականատիրական իրավունքը գյուղացիության ոտնձգությունների դեմ։

Առիթ ունենալով հողերի սահմանագծման կապակցությամբ գյուղացիների վճռական ելույթները կալվածատերերի դեմ Ղազախի գավառում, «Նոր-Դարձ»-ի թղթակից Ա. Ագապյանը 1895 թ. գրում է, որ «գյուղացիք առանց բացառության սեփականության դեմ են. չեն ուզում, որ ազնվականները հող ունենան։ Գյուղացիներին հասկացնում են, որ այդ բանից իրենց, բացի օգուտից, ֆնաս չկա, չեն ուզում հասկանալ»։

Եվ ահա «Նոր-Դարձ»-ի թղթակիցը գյուղացիների այդ «անհասկացողության» դեմ պաշտպանություն է որոնում ցարիզմի հեռաահս քաղաքականության մեջ, որով ապահովված էր կալվածատիրոջ սեփականությունը գյուղացու հափշտակումից։

«Ինչ կլիներ հայ ազնվականի օրը, եթե նրա բախտը վճռողը յուր համագյուղացին լիներ. լավ է, որ օրենքն իմաստությամբ նախատեսելով այդ բանը, համագյուղացիներին ավելի իրավունք չի ավել»։

Ամեն անգամ, երբ «Նոր-Դարձ»-ն առիթ է ունենում կալվածատիրության հետ կապված հարցերին անդրադառնալ, ապա շարունակ այս նույն գիծն է պաշտպանում՝ կալվածատիրոջ սեփականության անձեռնմխելիությունը։

Իսկ երբ հարց է ծագում գյուղացու ազատագրման մասին կալվածատիրական լծից ե նրա՝ իր հողաբաժնի տերը դառնալու ուղին է նշվում, ապա «Նոր-Դարձ»-ը միայն մի միջոց գիտե՝ հետգնման միջոցը։ Թող պետությունն Անդրկովկասում էլ գյուղացիներին փոխառություն տա կալվածատերերից իրենց հողաբաժինները հետգնելու համար։

«Միևնույն բանը կարելի էր առանց տերության միջամտության էլ կատարել, եթե մեր հարուստները համաձայնվեին կազմել բանկեր»,—ավելացնում է «Նոր Դարձ»-ը։[3]

Այս երկու ձևով հողաբաժնի հետգնման կազմակերպումը «մեր գյուղացվոց համար կլիներ մեծ վերանորոգություն»,—եզրակացնում է «Նոր-Դարձ»-ը։

Ինչպես տեսնում ենք, «Նոր-Դարձ»-ը ցարական գյուղացիական ռեֆորմի լրիվ կենսագործումն Անդրկովկասում արգեն իսկ «մեծ վերանորոգություն» էր համարում գյուղացիության համար։ Այդ հասկանալի է, չէ՞ որ, ինչպես տեսանք, ֆեոդալական հարաբերությունների վերացման հար-

---

[1] «Նոր-Դարձ», 1896 թ., № 87, «Մեր վանքերի հարստությունը» առաջնորդող։

[2] «Նոր-Դարձ», 1895 թ., № 51, Ա. Ագապյան, Մարտի 3-ը Ղազախում։

[3] «Նոր-Դարձ», 1895 թ., № 177, Մ. Բահաթրյան, Մահմեդականները և հայերը Շարաբոզում։

ցում «Նոր-Դարձ»-ի գաղափարական նախորդը՝ «Մեղուն» նույնիսկ ավելի հետաքրքիր տրամադրություն էր հանդես բերում, քան այն, ինչ որ կար ցարական կիսաճորտատիրական ռեֆորմում։

* * *

Հայ չափավոր-բուրժուական հոսանքի օրգաններում, Արգար Հովհաննիսյանի հրատարակած «Փորձ»-ում (1876—1881 թ. թ.) և «Արձագանք»-ում (1882—1898 թ. թ.) կարելի է բավականաչափ քննադատական գիտողություններ գտնել ցարական գյուղացիական ռեֆորմի, նրա կիսաճորտատիրական արդյունքների մասին Անդրկովկասում, մասնավորապես Վրաստանում։ Այսպես, օրինակ, «Փորձ»-ում նշվում է, որ չնայած Վրաստանում 1864 թ. վերացվեց ճորտատիրական իրավունքը, «Սակայն ժողովուրդը դարձյալ մնաց իր նախկին կալվածատերերի ազդեցության տակ և նախկին տգիտության և թշվառության մեջ»[1]

Ապա ուշադրություն է հրավիրվում Վրաստանի և Հայաստանի սակավահող, ծանր տուրքերով ճնշված կալվածատիրական գյուղացիների քայքայման և քաղաք աշխատանքի գնալու երևույթի վրա և այլն։

«Փորձ»-ից ավելի զուսպ է նրա հաջորդը՝ «Արձագանք»-ը, որ Ալեքսանդր III-ի թագավորության ռեակցիոն կուրսի տարիներում էր հրատարակվում։ Բայց նա էլ երբեմն չի գլանում Անդրկովկասի գյուղացիական ռեֆորմի բացերը նշել, մասնավորապես ընդգծվում է այն հանդամանքը, որ գյուղացիները, իբրև կանոն, չեն ստացել «անգամ ռեֆորմով նախատեսված հողաբաժինը և այլն»[2]

Սակայն ինչպես «Փորձ»-ի, այնպես էլ «Արձագանք»-ի քննադատական դիտողությունները ցարական ռեֆորմի հիմունքների դեմ չեն ուղղված, այլ մասնակի թերություններին։ Հայ չափավոր-բուրժուական հոսանքի այդ օրգաններն ամբողջովին կանգնած են ցարական ռեֆորմի սկզբունքների վրա և կալվածատիրական սեփականության գեմ, ինարկե, հանդես չեն գալիս, ընդհակառակը, գտնում են, որ կալվածատիրական գյուղացուն օգնելու մի ուղի կա միայն, այն է՝ Ռուսաստանի օրինակով գյուղացիական բանկ հիմնել Անդրկովկասում, որ նրա վարկերով գյուղացիները հնարավորություն ստանան հետ գնել կալվածատիրոջից իրենց հողաբաժինները։[3]

Իսկ դրա կողքին նրանք մեծ հոգատարություն են երևան բերում դեպի հայ եկեղեցական ու աշխարհիկ կալվածատիրական տնտեսությունը, դեպի նրա եկամուտները, նրա դարգացումը։ «Արձագանք»-ը, օրինակ, 1882 թ. մտահոգված ժատնանշում է, որ «էջմիածնապատկան կալվածների տարեկան եկամուտը եթե չի պակասում, չի ավելանում», և այդ չարիքի առաջն առնելու համար առաջարկում է վանքի կալվածների կապալով տալու աճուրդը կազմակերպել ոչ թե էջմիածնում, այլ Երևանում, որտեղ մրցում շատ կլինի կապալառուների միջև։ Իսկ գյուղացիների՞ շահերը՝— Նրանք «այն տեսակ մարդիկ չեն, որ չկարողանան իրանց արդար իրա-

[1] «Փորձ», 1876 թ., № 2, Գյուղացի. Թիֆլիսի շրջակա գյուղերի մասին, էջ 417։

[2] «Արձագանք», 1882 թ., № 22, Գ. Ն. Թիֆլիսից մինչև էջմիածին, էջ 509։

[3] «Արձագանք», 1882 թ., № 19, Համբ., Հոգային-Շինական բանկի կարևորությունը մեր երկրում, էջ 295։

վունքը պաշտպանել բողոքներով»,--պատասխանում է «Արձագանք»-ը։

Նույն թվականին «Արձագանք»-ը Երևանի մյուս կալվածատերերի անտեսության զարգացման հեռանկարների մասին խոսելով՝ հաղորդում է այն լուրը, թե «Պետերբուրգի դրամատեր պարոն Մ. Սանասարյանը... հայտնում է յուր պատրաստականությունը՝ Երևանում հողային կամ կալվածատիրական բանկ հիմնելուն ձեռքից եկածի չափ նպաստել և դրամով մասնակցել»։

Ապա ավելացնում է. «Եթե այդ գաղափարը իրագործվի, այնուհետև գոնյա Երևանա նահանգի կալվածատերերը միջոց կունենան բարգավաճելու և հառաջ դիմելու պ. Մ. Սանասարյանի շնորհիվ»[1]

Այսպես էր ծրագրում «Արձագանք»-ը հայ կապիտալիստի և կալվածատիրոջ գործակցությամբ Հայաստանում ապահովել կալվածատիրական-կապիտալիստական տնտեսության ծաղկումը ցարական ռեֆորմի գծած ուղիով։

Այդ պատճառով էլ զարմանալի չէ այն ներբողը, որ կարդում է «Արձագանք»-ը այդ ռեֆորմին՝ նրա 35-ամյակի կապակցությամբ. Ռուսաստանում «...դարավոր ստրկությունն ստեղծեց մի սոսկալի մեռելային աշխարհ,... ուր տիրում էր խավար...։ Ապասել, որ այդ խավարից ինքնուրույն լույս ծագի, անհնարին էր...»,—գրում է նա։ «Լույսը և ջերմությունը հարկավոր էր արտաքուստ։ Եվ ահա այդ լույսը 1861 թ. փետրվարի 19 ին Ալեքսանդր 2-րդ կայսեր հրովարտակն էր, որ հայտնեց ստրուկների ազատությունը»։

Ապա, շարունակում է «Արձագանք»-ը, Ալեքսանդր 2-րդը տվեց ժողովրդին նաև «նոր օրենք», այսինքն ճորտերի ազատագրության կանոնադրությունը։ Եվ իբր թե ցարն այդ «օրենքը տվավ իբրև ինքնապաշտպանության զենք ազատված ժողովրդի ձեռքը, որպեսզի կարողանա դրանով պաշտպանել իրան այն ոտնձգություններից, որ անխուսափելի կերպով պրտի գործ դնեին «ստրուկներից» զրկված «տերերը»։

Ինչպես տեսնում ենք, հայ բուրժուական օրգանը լիովին կրկնում էր ռուս լիբերալ շրջանների քարոզած կեղծ պատմությունը գյուղացիական ռեֆորմի մասին, պրուսական տիպի ռեֆորմը հրամցնելով իբրև գյուղացիության շահերի պաշտպանություն, մի խոսք անգամ չթողնելով այն ուղու մասին, որի համար ռեֆորմի շրջանում և հետագայում պայքարում էր ժողովուրդը։

Հայ լիբերալների օրգանը՝ «Մշակ»-ը մյուս հայ թերթերի համեմատությամբ ամենից շատ է զբաղվել գյուղացիական հարցով, մանավանդ 80-ական թվականների սկզբից, երբ քննվում էր հողի հետգնման հարցն Անդրկովկասում։ Այդ կապակցությամբ էլ, բնականաբար, նա առիթ էր ունենում իր դիրքը որոշելու դեպի ցարական գյուղացիական ռեֆորմը, հետևաբար և դեպի գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացման երկու ուղին։

Թեև «Մշակ»-ն ոչ Ռուսաստանի, ոչ էլ Անդրկովկասի գյուղացիական ռեֆորմի դեմ ըստ էության առարկություն չուներ, ընդհակառակը,

[1] «Արձագանք», 1882 թ., № 2, էջ 30.

[2] «Արձագանք», 1896 թ., № 21. Ս. Հ.. Ճորտերի ազատություն (19 փետրվարի 1861)։

60-ական թվականների մյուս բուրժուական ռեֆորմների շարքում նշում և փառաբանում էր նաև այդ ռեֆորմը, բայց հաճախ էլ քննադատում էր այդ ռեֆորմի ծորտատիրական մնացորդները, կալվածատերերի կամայականությունները գյուղում և այլն ու ռուս լիբերալների նման առաջ էր քաշում գյուղացիական ռեֆորմի բացերը վերացնելու, սխալներն ուղղելու խնդիրը։

Կալվածատիրական գյուղերում ռեֆորմից հետո էլ սովորական են ծանր ապօրինի տուրքերը և պարհակները,—գրում էր «Մշակ»-ը, բայց այդ բոլորը կապելով մեծ մասամբ կառավարիչների կամայականության հետ, նա առաջարկում էր այսպիսի ելք՝ թող գյուղացիները դնեն կալվածատիրոջից իրենց հողաբաժինները և դառնան ազատ սեփականատեր։ Հողաբաժնի հեռացումը և ընդհանրապես հող դնելը «Մշակ»-ի համար մի հաժաղարմանի նշանակություն էր ստանում գյուղացիներին կալվածատիրական և այլ կախումից փրկելու համար, և նա շատ անգամ էր հանձնարարում այդ միջոցը թե կալվածատիրական և թե ընդհանրապես մյուս սակավահող գյուղացիներին։

Իսկ հետգնումը կազմակերպելու համար «Մշակ»-ն առաջարկում էր հիմնել դանազան բանկեր, որոնք վարկ բաց թողնեն գյուղացիներին։ Կար, ըստ «Մշակ»-ի, նաև մի այլ միջոց.—«Ստեղծել մեծ առևտրական ընկերություն, որն առնի հարմար ժամանակում հողը, բաժանի մանր մասերի և ծախի մեր գյուղացիների վրա»։

«Մշակ»-ի առաջարկած այդ բոլոր միջոցների էությունը պարզելու համար՝ բերենք նրա կարծիքը հողային հարցի լուծման մի այլ առաջարկի մասին։

«Ու ը է մեր գյուղացու փրկության ճանապարհը և աղբյուրը»,—հարցնում է «Մշակ»-ը և այդ առիթով այսպիսի կծու խոսքեր է ուղղում իր տեսակետի հակառակորդների հասցեին. «Հետևելով ժամանակի մոդային՝ մեր պոռոտախոս փիլիսոփաները միաձայն առաջարկում են կալվածատերերից հողը հետ առնել կամ խլել...»[1]

Պարզ է, որ «Մշակ»-ը համաձայն չէ հողային հարցի այդպիսի լուծման հետ, որովհետև նա պաշտպանում է ցարական ռեֆորմը և միայն կարկատաններ է առաջարկում նրա թերությունների վերացման համար, իսկ «պոռոտախոս փիլիսոփաները» ցանկանում են ուղղակի խլել կալվածատիրական հողը և դյուղացուն տալ այն։

Այսպիսով, «Մշակ»-ը որոշում է իր դիրքն այն պայքարում, որ տեղի ուներ հողի շուրջը։ Ըստ էության նա կալվածատերերի հետ էր և գյուղացիների դեմ, պրուսական ուղու կողմնակից էր ընդդեմ ամերիկականի։

«Ճորաերի ազատության 30-ամյա տարեդարձը» առաջնորդողում ռեֆորմի արդյունքներն ու հեռանկարներն այսպես էր ամփոփում «Մշակ»-ը. «Ժամանակ է հարկավոր, որ հարթե, հավասարեցնե հասարակաց անհարթություններն ու անհավասարությունները, որից կծնվի ազգի ապագա

[1] «Մշակ», 1881 թ., № 223, Ս. Բանաթրյանց, Կալվածատիրական հարց։

[1] «Մշակ», 1882 թ., № 68, Ոսկան Սկիթարյանից. Ձեզ-յակոբ հոգաբարությունը Եվրոպայում, մեր երկրի հայրենակ մասերում և մեր գյուղացու այժմյան անհուսալի դրությունը։

բարօրությունը»։ «Իսկ ամբողջ ազգի այդ ապագա բարօրության հիմք դնողը,—նշում է այդ առաջնորդողի հեղինակը՝ Գր. Արծրունին,—եղել է այն մեծ կայսրի հզոր և մարդասեր կամքը, որի անունը ոչ թե միայն ռուսաց պատմության, այլև ընդհանուր մարդկային պատմության էջերի վրա կարձանագրվի ոսկյա տառերով, որպես համամարդկային ամենամեծ վերանորոգիչներից մինի անունը»։

Եթե մի կողմ թողնենք բերած հատվածի՝ լիբերալներին հատուկ չոր-ղոքորթ լեզուն, որով ընդհանրապես խոսվում էր Ալեքսանդր 2-րդի և նրա ռեֆորմների մասին, ապա կմնա այն էականը, որ նույնպես հատուկ է բոլոր լիբերալներին, թե հայ և թե ռուս. այդ այն է, որ «Մշակ»-ը «ազգի ապագա բարօրության» հիմքը խարսխված է տեսնում ցարական գյուղացիական ռեֆորմի վրա, այսինքն պրուսական տիպի կապիտալիզմի զարգացման վրա գյուղատնտեսության մեջ։

1892 թվականին լույս տեսած Գրիգոր Զանչիևի „Из эпохи великих реформ“ գրքի առիթով, որը, ինչպես հայտնի է, Ռուսաստանի գյուղացիական ռեֆորմի լիբերալ պատմության նշանավոր նմուշներից մեկն է, Արծրունու երիտասարդ գինակից Լեոն հետևյալ ձևով է ներկայացնում «Ալեքսանդր կայսրի մեծ ռեֆորմներին» կենսագործման կեղծ իդիլիան, մի բառ անգամ չթոթովելով ժողովրդի պայքարի մասին դրանց դեմ. «Անպատրաստ ժողովուրդը յուրացրեց մեծիմաստ, մարդասեր բարեփոխումները, խաղաղությամբ սկսեց առաջ գնալ այն զարկից, որ տվել էր ազատարար իշխանությունը, և այժմ էլ նա անվրդով վայելում է այդ բոլոր բարիքները...»։

Ռուս և հայ լիբերալները ձեռք էին մեկնում իրար «խաղաղ», «անվրդով» գյուղացիական ռեֆորմը փառաբանելու գործում, ժողովրդի թափած արյան ու պայքարի մասին անպատշաճ էր համարվում անգամ ակնարկել։ Եվ «Մշակ»-ը 1894 թ. արտատպում է ռուս լիբերալների „Русские ведомости“ (№ 63) թերթից նույն Գր. Զանչիևի մի հոդվածը 1861 թ. փետրվարի 19-ի մանիֆեստի հրապարակման որվա մասին «իբրև ճիշտ նկարագրություն պատմական դեպքի»։

Բերենք այդ «ճիշտ նկարագրությունը». Թեև «երկյուղ կար, որ մեծ խռովություններ և ժողովրդական հուզումներ պետք է աեգի ունենան»,—գրում է Զանչիևը,—«..., բայց ազատված ժողովուրդը օրինակելի կերպով պահեց իրան այդ օրը, նա ի դերև հանեց իշխանության երկյուղը և ծորության պաշտպանների հույսերը. նա ոչ միայն «խռովություն» չհանեց, այլև մինչև անգամ իր ուրախությունը չարտահայտեց աղմկալի ցույցերով, այնպես որ ձեռք առնված զինվորական արտակարգ միջոցները բոլորովին հարկավոր չեկան»։

Ահա այսպես էին «պաշտպանում» ռուս և հայ լիբերալները գյուղացիական մասսային ընդդեմ ցարիզմի և ճորտատերերի, նրան ներկայացնելով «խռովությունից» բոլորովին հեռու կանգնած, նույնիսկ իր ուրախությունը բուռն ձևերով արտահայտելու անընդունակ մի հնազանդ ու խոնարհ հպատակ ամբոխ։

[1] «Մշակ», 1891 թ., № 23, Գ. Ա., Ճորտերի ազատության 30-ամյա տարեդարձը։
[2] «Մշակ», 1892 թ., № 33, Լեո, Նկատողություններ։
[3] «Մշակ», 1894 թ., № 34, S., Ռուսաստանի կյանքից։

Եվ զարմանալի չէ, որ հայ լիբերալների առաջնորդը ծրագրում էր այդ ամբոխի հայ հատվածի խնամակալությունը հանձնել հայ կապիտալիստներին և բուրժուական ինտելիգենցիային, նրանց կոչ անելով կանգնել հայրենի երկրի անտեսական զարգացման գլուխ. «Կապիտալը և մտավոր ուժը, վաճառականությունը և ուսանողությունը, թող ձեռք ձեռքի տված ընթանալով, մտածեն ոչ թե միշտ հեռու մնալ մայրենի հողից, այլ վերջիվերջո վերադառնալով հայրենիքը՝ ջանան միացած ուժերով բարձրացնել երկրի արդյունագործությունը, տնտեսական դրությունը և հայ գյուղացու վիճակը»[1]

Ի՞նչ եղրակացություններ կարելի է հանգել հայ բուրժուական հոսանքների պաշտպանած ծրագրերի ու իդեաների մասին հողային հարցի լուծման նկատմամբ։

Լենինը, խոսելով ռուս լիբերալների մասին նույն հարցի կապակցությամբ, նշում է նրանց տեսակետի հիմնական արատը. «Մեր լիբերալները «գյուղացիական հարցը» շարունակ քննում են գյուղացիների «սակավահողության», կամ նրանց կենցաղի «պետական կարգավորման» անհրաժեշտության, կամ այս կամ այն «նորմայով» նրանց հող տալու տեսակետով...։ Այդպիսի տեսակետն իր արմատում ճիշտ չէ։ Գործը վերաբերում է տնանկության ծորտատիրական հարաբերությունների հողի վրա տեղի ունեցող դասակարգային պայքարին և ուրիշ ոչինչ։ Գալվածատերերի այժմյան հողատիրությունը պահելիս՝ ռնիությունի l. ճնշման (кабала), ճորտատիրության և... ստրկության պահպանումը։ Ո՛չ մի «ռեֆորմ» և ոչ մի քաղաքական փոփոխություն այստեղ չեն օգնի։... Պետք է խոսել դասակարգային ճորտատիրական ճնշման վերացման մասին, որը խանգարում է կապիտալիստական երկրի զարգացումը»։

Նույնը կարող ենք ասել նաև հայ բուրժուական հոսանքների տեսակետի մասին մեր քննության հնթակա հարցում։ Նրանք այս կամ այն մասնակի խնդրում իրարից տարբերվելով. ամենաէականում իրար հետ համաձայն են, նրանք այս կամ այն վճռականությամբ, այս կամ այն չափի շահագրգռությամբ միայն խոսում են պետության միջոցով գյուղացիությանն օգնելու, սակավահողությունը վերացնելու, հոյ գնելու մասին և այլն։ Բայց նրանք, ռուս լիբերալների նման, չեն խոսում ամենահիմնականի մասին, այսինքն «դասակարգային ճորտատիրական ճնշման վերացման մասին, որը խանգարում է կապիտալիստական երկրի զարգացումը», չեն խոսում «գալվածատերերի այժմյան հողատիրությունը» վերացնելու մասին, ուրիշ խոսքով նրանք ըստ էության չեն առարկում ցարիզմի անցկացրած «պրուսական տիպի» գյուղացիական ռեֆորմի դեմ, այլ կանգնած լինելով նրա հողի վրա, մտահոգված են միայն նրա լավացման և լրացման գործով, որ կապիտալիզմի զարգացման շահերին ավելի լավ հարմարեցվի այն։

* *

Գյուղացիական և հողային հարցերով անցյալ դարի 80-ական և 90-ական թվականներին հայ մամուլի էջերում շատ գրաղվել է մեր ինտելի-

[1] «Մշակ», 1889 թ., № 99, Գ. Արծրունի, Տպավորություններ։
[2] Ленин, Соч., т. XVII, стр. 388.

դենցիայի այն հատվածը, որի վրա ակներև է ռուսական նարոդնիկության իդեաների ազդեցությունը. դրա մեծ մասը Ռուսաստանում սովորող կամ սովորած հայ ուսանողությունն էր։ Նարոդնիկորեն տրամադրված այդ ինտելիգենցիան մեր մամուլի մեջ հանդես եկավ գլխավորապես այն ժամանակ, երբ արդեն սկսված էր ռուսական նարոդնիկության լիբերալ այլասերման պրոցեսը, երբ նարոդնիկական գրոհը ցարիզմի վրա արդեն լիակատար կրախի էր ենթարկվել, երբ լիբերալ նարոդնիկական հայացքներն էին իշխող դառնում մամուլում և գրականության մեջ։

Այդ ակներևորեն նկատելի է նարոդնիկորեն տրամադրված այն հայ հրապարակախոսների գրվածքներում, որոնք աշխատակցում էին Սիմոն Հախումյանի 1882—1884 թ.թ. հրատարակած «Գործ» ամսագրին, «Մեղու»-ին, «Մշակ»-ին և «Նոր-Դար»-ին։

Իհարկե, նրանք գյուղացիական ու հողային հարցերի քննության կապակցությամբ չէին կարող չզբաղվել գյուղացիական ռեֆորմի և նրա արդյունքների հարցով, ապա հողաբաժնի հետգնման խնդրով, որ ընդհանուր ուշադրության առարկա էր դարձել Անդրկովկասում 80-ական թվականների սկզբից և, հետևաբար, չէին կարող իրենց վերաբերմունքը ցույց չտալ դեպի կապիտալիզմի զարգացման պրուսական և ամերիկական ուղիները։

Մեզ այստեղ չեն հետաքրքրում այդ հոսանքի տարբեր ներկայացուցիչների հայացքների առանձնահատկությունները, այլ այն ընդհանուր գիծը, որ միացնում է նրանց մեր քննության ենթակա հարցում։ Իսկ այդ ընդհանուր գիծը կարելի է ճիշտ ըմբռնել և պատմականորեն ճիշտ գնահատել, եթե նկատի ունենանք Լենինի ցուցումն այն մասին, թե ինչ պատճառով և ինչ անխուսափելի այլասերում կատարվեց 80-ական թվականների սկզբից ռեոլուցիոն նարոդնիկության մեջ։

«... Գյուղը վաղուց արդեն բոլորովին ճեղքվել էր։ Նրա հետ միասին ճեղքվել էր նաև ռուսական հին գյուղացիական սոցիալիզմը, իր տեղը զիջելով մի կողմից՝ բանվորական սոցիալիզմին, իսկ մյուս կողմից՝ վերասերվելով գռեհիկ մեշչանական ուադիկալիզմի։ Այլ կերպ չի կարելի անվանել այդ փոխարկումը... Մի քաղաքական ծրագրից, որ հետամուտ էր այն բանին, որ գյուղացիությանը ոտքի հանի սոցիալիստական ռեոլուցիայի արդի հասարակության հիմունքների դեմ,—աճեց մի ծրագիր, որ հետամուտ էր այն բանին, որ կարկատի, «լավացնի» գյուղացիության դրությունը արդի հասարակության հիմունքները պահպանելով»։[1]

Ահա, ելակետ ունենալով Լենինի այս ցուցումը, կարելի է ճիշտ հասկանալ և գնահատել հայ լիբերալ նարոդնիկների դիրքը դեպի այն պայքարը, որ կար գյուղացիության և կալվածատերերի միջև գյուղատնտեսության կապիտալիստական զարգացման երկու ուղու համար։

«Գործ» ամսագրի աշխատակիցները եռանդով պաշտպանում են գյուղական հողային հատկացումներն իբրև ժողովրդական շահերի ապահովության ամենակատարյալ հողատիրության ձև, քննադատում են 1861 թ. ցարական ռեֆորմը, որը գյուղացու վրա կալվածատիրական շահագործման փո-

[1] Ленин, Соч., т. I, стр. 165.

խարեն կապիտալիստականը հաստատեց.[1] կոչ են անում պահպանել գյուղական կյանքի անարատությունը և հայ գյուղացուն հեռու պահել կապիտալիստական հարաբերությունների «ապականությունից», կապել նրան հողի հետ։

Սակայն նրանք գյուղացուն հող տալու միակ միջոցը համարում են ձեռնտու պայմաններով կազմակերպված հետգնումը, այսինքն այն սկզբունքը, որ սահմանված էր ցարական ռեֆորմով, որովհետև կալվածատերերի «ձեռքից խլել իրենց սեփականությունը»[2] այդ «բռնակալություն կլիներ»,[3] ինչպես արտահայտվում է նրանցից մեկը։

Այսպիսով, գուրս է գալիս, որ «Գործ»-ի շուրջը համախմբված և նարոդնիկորեն տրամադրված երիտասարդ հայ «ժողովրդասերներին» գյուղացուն օգնելու ծրագրերի գործնական արդյունքն այն է, որ նրանք փաստորեն սահմանագծվում են հողային հարցի լուծման ամերիկական ուղուց և ընդունում պրուսականի անխուսափելիությունը, այսինքն՝ կանգնում են ռեֆորմի ուղու վրա ընդդեմ ռեոլուցիայի։

Այսպիսի «ժողովրդասերներին» նկատմամբ միանգամայն կիրառելի են ընկեր Սաալինի հետևյալ խոսքերը գրված 1906 թ. սկզբներին. «Ոչ։ Դյուղացիներին հողի հետգնումը չի փրկի։ Նրանք, ովքեր նրանց խորհուրդ են տալիս «արտոնյալ հետգնում», դավաճաններ են, որովհետև նրանք ջանում են գյուղացիներին բռնել մակլերական ցանցում և չեն ցանկանում, որպեսզի գյուղացիների ազատագրությունը կատարվի հենց գյուղացիների իսկ ձեռքով։»[4]

Լիբերալ նարոդնիկական հայացքներով են տոգորված «Գործ» ամսագրի նաև մյուս երկու աշխատակիցները, որոնք 80-ական թվականների սկզբներին բավական եռանդով դրաղվել են գյուղացիական հարցով, երբևէ միայն արձագանքելով ռեոլուցիոն-դեմոկրատական տրամադրություններին։ Նրանցից մեկը՝ Ալ. Քալանթարը, այդ տարիներում գլխավորապես գրում էր «Մշակ»-ում, իսկ մյուսը՝ Հովսեփ Տեր-Մովսիսյանը. «Մեղու»-ի մեջ։ Սրանց շարքում պետք է հիշատակել նաև 80-ական թվականների կեսից «Մշակ»-ում հանդես եկած Ս. Դորդանյանին։

Հովսեփ Տեր-Մովսիսյանը, օրինակ, գուրս է գալիս ցարական ռեֆորմի հիմնական սկզբունքներից մեկի՝ հողը հետգնման վճարով գյուղացուն տալու դեմ և այդ հարցում կրկնում է Չերնիշևսկու մտքերը, այն է՝ ոչ մի հետգնման վճար, կամ ծայրահեղ դեպքում՝ այդ վճարն ամբողջ երկրի հաշվին։ Իսկ Անդրկովկասի գյուղացիական ռեֆորմի ավարտուկ նա հետևյալ ձևով է պատկերացնում. «Մեր հայրենիքի համար մի բախտավոր օր կլինի, երբ բեկ և որիաբ բառերը կկորցնեն իրենց նշանակությունը, երբ այդ ստրկության փոխարեն Ռուսահայաստանում կիշխեն աշխատանքն և հավասարությունը։ Սրբ բեկի, մելիքի, խանի, որիաբի փոխարեն կլինեն միայն ազատ աշխատավոր երկրագործներ, որոնք իրենց բրտինքով կվաստակեն իրենց օրվա հացը։»[5]

[1] «Գործ», 1882 թ., № 1, Հուլյա. Համայնքը և նրա նշանակությունը, էջ 41—50։
[2] «Գործ» 1882 թ., № 1, Ուստամ. Արցախու աշխարհ (Ղարաբաղ), էջ 28—31։
[3] «Գործ» 1882 թ., № 1, Հ. Կամսարյան. Հողաբերության և կալվածական խնդիրը Անդրկովկասում, էջ 63։
[4] И. В. Сталин, Соч., т. I, стр. 216.
[5] «Մեղու Հայաստանի», 1881 թ., № 234, Հ. Տեր-Մովսեսյանց, Հողաբերության խնդիրը։

Ակներև է, որ Տեր-Մովսիսյանի այս ցանկությունները հարազատ են Դերցենի երազած ռուսական սոցիալիզմին, այսինքն՝ ըստ էության ամերիկյան կապիտալիզմի զարգացման շահերի արտահայտություն են. թեև նարոդնիկական մոլորությամբ նա երազում է ժողովրդական արտադրությունն կազմակերպելու մասին ի հակադրություն կապիտալիզմի։

Նման սրամտություններ կարելի է գտնել նաև Ալ. Քալանթարի 1880-ական թվականների սկզբի հոդվածներում, թեև ավելի խունացած ձևով։ Նա հանդես է գալիս հետգնման վճարը ժենակ գյուղացու վրա գցելու սկզբունքի դեմ, նաև Երևանի կալվածատերերի այն ծրագրի դեմ. որ գյուղացիներին տրվի կալվածատիրական հողի [1]-ը միայն. ապա ցարիզմի այն քաղաքականության դեմ, երբ պետական օրենքով քանդվում էր համայնքը և այլն։[2]

Ս. Ղորդանյանը նույնիսկ ավելի առաջ է գնում և հանդես է գալիս Անդրկովկասի 1870 թ. ցարական ռեֆորմի դեմ. «...Շինական ռեֆորմը բոլորովին քացառական նշանակություն ունեցավ մեր երկրի համար. գրում է 1886 թ. Ղորդանյանը,—նա առեցրեց Անդրկովկասի բեգերի տարրը և արտոնագիրը (уставная грамота) նրանց գենք ավեց՝ իրավունքից զուրկ գյուղացու դեմ գործելու համար, նաև պետական ու հասարակական հոգերը հափշտակելու համար։

Սակայն այս երեք հեղինակի մոտ էլ, թեև ոչ նույն չափով ու ձևով, նշված դեմոկրատական, գյուղացիական շահերի պաշտպանությանը տեսամուտ մտքերի կողքիս, իբրև նրանց հայացքների տիրապետող գիծ հանդես է գալիս լիբերալ-նարոդնիկական տեսակետը։ Այդ երևում է ոչ միայն այն բանից, որ նրանք սովորաբար քննադատում են կալվածատերերին, իսկ ցարիզմի գյուղացիական ռեֆորմի սրենքը, լիբերալների նման, հաժարում են ժողովրդի բարօրությանը հետաձուտ մի ձեռնարկություն, այլև այն բանից, որ գյուղացիության համար հողային հարցի լուծումը, էլի լիբերալների նման, սպասում են վերևից, իսկ, օրինակ, 1861 թ. ռեֆորմի չբրջանի գյուղացիության պայքարը ցարիզմի դեմ գնահատում են իբրև աղետալի հետևանքներով մի բան, այսինքն՝ լիովին գատվում են ռեակցիոն դեմոկրատների տրադիցիաներից և կանգնում լիբերալների ուղու վրա։ Այսպիսով՝ նրանց ժողովրդասիրությունը նրանց մղում էր ոչ թե դեպի պայքար ցարիզմը և ճորտատիրությունը տապալելու համար, այլ դեպի լիգալ դրական պրոպագանդա՝ ցարական ռեֆորմը կարկատելու և լավացնելու համար, առանց ցարիզմին և ցարական ամբողջ հասարակական կարգի հիմքերին դիպչելու։

Այսպես, օրինակ, Հովսեփ Տեր-Մովսիսյանը գյուղացիական ռեֆորմի կապակցությամբ խոսելով Նիկոլայ I-ի շրջանի ռուսական գյուղացիական շարժումների մասին, եզրակացնում է. «Այս փոքրիկ կայծերից կարելի էր սպասել մի անավոր պայթում ժողովրդական զայրույթի. բայց բախտավորաբար բանը այդպես չհասավ։ Իսկ ռեֆորմի շրջանի գյուղացիական շարժումները նկատի ունենալով՝ նա գրում է. «Եթե գյուղացոց խնդիրը վերևից չլուծվեր, գուցե նա շատ աղետալի հետևանքներ ունենար։

[1] Մշակ. 1881 թ., № 133. Ալ. Քալանթար, Կալվածական խնդրի առթիվ։
[2] «Մշակ». 1880 թ., № 136, Ս. Ղորդանյան. Քաղաքական նամակներ։

Ապա այդ վերևից լուծված խնդրի, այսինքն ռեֆորմի արդյունքներին այսպիսի գնահատական է տալիս. «այդ տարուց (այսինքն՝ 1861 թ.։—Վ. Ռ.) սկսվել է Ռուսաստանի համար նոր ադատ և բախտավոր կյանք։[1]

Նույն ոգով են արտահայտվում նաև Ալ. Քալանթարը[2] և Ս. Ղորդանյանը։[3]

Հիշենք, որ ռեակցիոն-դեմոկրատ Չերնիշևսկին ցարական ռեֆորմն անվանում էր գարշելի բան և գյուղացիական ապստամբությունից էր միայն սպասում Ռուսաստանի նոր ու ադատ կյանքը։[4]

Պարզ է, որ հայ լիբերալ նարոդնիկներն իրենց ռուս ուսուցիչների նման բոլորովին հեռացել էին ռևոլուցիայի ուղուց և կանգնել ռեֆորմի ճանապարհի վրա և, հետևաբար, ըստ էության անցել կապիտալիզմի զարգացման պրուսական ուղին պաշտպանողների բանակը։

*

Անցյալ դարի 80-ական և 90-ական թվականներին հայ մամուլում երևան են գալիս ժողովրդասիրական տրամադրություններով տոգորված այլ հեղինակներ էլ, բայց նրանց դեմոկրատական ծրագրերը հանգում են ի վերջո սոսկ բարեհոգի ցանկությունների, քանի որ նրանք հեռու են ռեակցիոն ուղուց, ժողովրդին հողի և իր իրավունքների համար պայքարի հանելու դիտակցությունից։

Այդպիսի տրամադրությունների արտահայտման առիթ են ծառայել, օրինակ, Անդրկովկասի կալվածատիրական դյուղացիության համար ստեղծված կիսաճորտատիրական ծանր դրությունը ռեֆորմից հետո, ապա այն հանգամանքը, որ հողերի սահմանադծման կապակցությամբ սուր բնույթ էր ստացել գյուղացու տարերային ու անկազմակերպ պայքարը կալվածատերերի դեմ։

Բերենք մի երկու օրինակ։

«Փորձ» ամսագրի աշխատակից Գյուղացին 1881 թ. նկարագրելով Վրաստանի մայրաքաղաքի շրջակա գյուղացիների տաժանելի դրությունը կալվածատիրական լծի տակ 1864 թ. «ազատագրությունից» հետո, այսպիսի ուշագրավ միտք է հայտնում, որ ուղղված էր ցարական կալվածատիրական ռեֆորմի դեմ և ըստ էության արտահայտում էր ֆեոդալական հողատիրությունը ոչնչացնելու և հողը գյուղացուն տալու ժողովրդական ձգտումը.

«... Ամենից լավը և հիմնավորը այն է, որ ավատականություն չլինի, և հողը պատկանի հողագործ դասին, ինչպես պատկանում է գերմանացի գաղթականներին»։[5]

Բայց սրանով էլ վերջացնում է հեղինակը և ոչ մի ակնարկ չի անում այն մասին, թե ինչպես է հնարավոր Անդրկովկասի կիսաճորտ գյուղացուն «գերմանացի գաղթականների» ադատ սեփականատեր գյուղացու պայմանների մեջ դնել, «ավատականության» կապանքներից փրկել։

[1] «Մեղու Հայաստանի», 1881 թ., № 233, Հ. Տեր-Մովսեսյանց, Հողատիրության խնդիրը։

[2] «Մշակ», 1881 թ., № 175, Ա. Քալանթար, Կալվածատիրական խնդրի առիթով։

[3] «Մշակ», 1900 թ., № 183, Ղ. (Ս. Ղորդանյան։—Վ. Ռ.) Դավառական նամակներ, նաև «Մշակ», 1900 թ., № 229, XXX (Ս. Ղորդանյան։—Վ. Ռ.). Դավառական նամակներ։

[4] Տես Лекин., Соч., т. I, стр. 179—180.

[5] «Փորձ», 1876 թ., № 2, էջ 420, Գյուղացի, Թիֆլիսի շրջակա գյուղերի մասին։

«Փորձ»-ի ժողովրդասեր հրապարակախոսի գլխում, ինչպես երևում է սրա ամբողջ հոդվածից, այդ հարցը չի էլ ծագում։

Իսկ մի այլ ժողովրդասեր հեղինակ, գյուղագիր Հար. Ռուղուրյանը, գայրույթով մերկացնելով ցարական չինովնիկների և հայ ու թուրք կալվածատերերի ակներև կամայականությունները Ղազախի գավառում 90-ական թվականներին, երբ այնտեղ հողերի սահմանագծում էր կատարվում, երբ այդ հանգամանքն օգտագործվում էր գյուղացիական մասսային կողոպտելու և հողազրկելու համար,—այլ միջոց չի դանում գյուղացու հողային իրավունքները պաշտպանելու. նրա շահերն ապահովելու համար, քան այն, որ հարց է հարուցում, թե պետք է հոգալ ցարական հողաչափության օրենքի իբր թե կիսատ կամ պակասավոր կետերը լրացնելու մասին և ապա «բախտավոր ու աչքածակ ազնվականներին ու աղալարներին» խորհուրդ է տալիս անգթաբար չվարվել ռամիկների հետ։[1]

Ինչքան էլ մեր գյուղագիրն անկեղծորեն լցված էր ժողովրդին իր դասակարգային թշնամիների և կողոպտիչների լծից փրկելու բարի ցանկություններով, այնուամենայնիվ պարզ է, որ ցարական «կիսատ» օրենքները կարկատելու, կամ ժողովրդի շահագործողների խղճին դիմելու ուղու վրա կանգնելով՝ նա ժողովրդին իրական օգնություն ցույց տալու ասեն հանապարհ փակում էր իր առաջ։

Նույն Ղազախի գավառի հողաչափության անցուդարձը նկատի ունենալով՝ «Նոր-Դարձ»-ի մի այլ աշխատակից, մեր լավագույն գյուղագրերից մեկը՝ Արշակ Ագապյանը, հետևյալ ցայտուն բառերով է արտահայտում գյուղացու ատելությունը դեպի իր դարավոր շահագործողները. դեպի կալվածատերերը. «...գյուղացին աչքով աչք չունի տեսնելու այն տեսակ մարդկանց, որոնք հողագործությամբ չպարապելով հանդերձ, ուզում են հողերի տեր դառնալ...»։[2]

Սակայն գյուղացիների և կալվածատերերի միջև հողի չուրջը բորբոքված այդ պայքարի մոմենտում՝ նա կամ հողագործությամբ չպարապող, բայց «հողի տեր դառնալ» ձգտողների իրավունքն է պաշտպանում «անհասկացող» գյուղացիների դեմ. ինչպես արդեն տեսել ենք «Նոր-Դարձ»-ի տեսակետը ռեֆորմի մասին քննելու կապակցությամբ, կամ ռուսական նարոդնիկ գրողների, մասնավորապես Դյեր Ուսպենսկու հետևողությամբ բավականանում է գյուղացու հոգևոր ու ֆիզիկական բարեմասնությունների փառաբանումով միայն, այդ բոլորը կապելով հողի աշխատավորի գյուղատնտեսական աղնիվ աշխատանքի հետ և բացատրելով մայր հողի բարերար ազդեցությամբ իր քրտնքի հալալ արդյունքով ապրող գյուղացու վրա։[3]

Պարզ է, որ հայ ժողովրդասեր գյուղագիրը գյուղացու ամեն առաքինությունների աղբյուր համարվող հողը նրան տալու հարցում կանգնած է ցարական ռեֆորմի սկզբունքների վրա, գյուղացու պայքարը կալվածատիրոջ դեմ հողի համար, այդ պայքարի ռեալուցիոն էությունը հասկանա-

[1] «Նոր-Դարձ», 1895 թ., № 147. Հ. սարկ. Ռուղուրյան. Ղազախի գավառի հողաբերությունը անցյալում և ներկայում։

[2] «Նոր-Դարձ», 1894 թ., № 203. Ա. Ագապյան. Հողի ազդեցությունը երկրագործի գործի վրա։

[3] Նույն տեղում։

լուց նա բոլորովին հեռու է։ Ահա ինչու գյուղի ու գյուղացու գովքը, նրա կյանքի իդեալականացումը հայ գյուղագրի գրչի տակ նարոդնիկուԹյան ռեակցիոն-ուտոպիստական գաղափարների կրկնուԹյուն է դառնում միայն՝ զուրկ կենդանի դեմոկրատական բովանդակուԹյունից։

* * *

Գյուղացիական ռեֆորմի, այսինքն ֆեոդալական հարաբերուԹյունների լիկվիդացիայի և հողը ժողովրդին տալու հարցը բոլորովին այլ մակարդակի վրա է քննել և գնահատել, այդ հարցի լուծման համար բոլորովին այլ ուղի է նշել հայ ռեոլուցիոն-դեմոկրատական հոսանքը, որի գլուխ էր կանգնած և որի լավագույն հրապարակական արտահայտիչն էր Միքայել Նալբանդյանը։ Ելակետ ունենալով այն սկզբունքը, Թե երբ «հասարակուԹյան մի մասը տիրապետել է հողին, իսկ մյուս մասը մնում է մուրացիկ, այնտեղ Թագավորում է բռնուԹյունը»[1] Նա անդրադառնում է Ռուսաստանին և նկատում, որ նրա համար «այս խնդիրը մահու և կյանքի խնդիր է», որովհետև վերաբերում է 23 միլիոն ճորտի, որոնց ըմբոստուԹյունը ճորտատիրուԹյան դեմ սպառնալի դարձավ ցարիզմի համար մանավանդ Ղրիմի պատերազմից հետո ստեղծված կրիզիսի պայմաններում, և ցարիզմը «հասկացավ, որ անցյալը չէ կարելի շարունակել...»[2]

Ահա դրա հետևանքով, նշում է Նալբանդյանը, ցարիզմն ստիպված եղավ ելք որոնել ռեֆորմի մեջ։ Ինչպես տեսնում ենք, հիմնականում ճիշտ է գծագրված գյուղացիական ռեֆորմին անցնելու պատկերը և ինչքան տարբեր է դա այն աՀենից, ինչ որ գրել են մեր բուրժուական հոսանքների ներկայացուցիչները ռեֆորմի նախապատրաստման մասին «ազատարար» ցարի միջոցով։

Ապա Նալբանդյանը ռեֆորմի ընԹացքը և նրա շուրջը պայքարող ուժերի հարցն է քննուԹյան առնում, այդ խնդրում մոտենալով Գերցենին, որը, ինչպես նշում է Լենինը, մի որոշ մոմենտ երևան բերեց լիբերալ տատանում, հնարավոր համարելով գյուղացիուԹյան պահանջների բավարարումը վերևից։ Նալբանդյանն էլ կարծում է, որ «հառաջընԹաց կուսակցուԹյունը (այսինքն լիբերալ հոսանքը։—Վ. Ռ.) միացած է ազգի էական սգտի, այսինքն ստրուկների (ճորտերի։—Վ. Ռ.) հետ։ Մենք տեսանք, որ Չերնիշևսկին այդ ժխտում էր, իսկ Լենինը նշում էր Չերնիշևսկու արդարացի և հետևողական լինելն այդ հարցում։

Ժողովրդի կողմից գենքի դիմելու անհրաժեշտուԹյան հարցում Նալբանդյանը նույնպես դնում է Գերցենի ուղիով։ Փետրվարի 19-ի մանիֆեստից հետո ստեղծված դրուԹյանն անդրադառնալով՝ Նալբանդյանը գրում է. «Բայց այս ջերմախտական և լարյալ վիճակը անհնար է, որ լինի երկարատև։ Եթե վաղորոք խելք գործ չդրվի և այս կերպով այն կնճիռը չլուծվի, ստրուկը կացինով վճռե գործը։ Ժամանակը շատ մոտեցած է և կարծվածից ավելի մոտեցած...»[3]

Նույն հարցերի մասին Գերցենը գրում էր.

---

[1] Մ. Նալբանդյան, ԵրկրագործուԹյունը որպես ուղիղ ճանապարհ, Երևան, 1930, էջ 59։
[2] Նույն տեղում, էջ 60
[3] Նույն տեղում, էջ 65։

«Կգա ճակատագրական օրը—կուրծքներդ դեմ տվեք, ընկեք կռվում, բայց մի կոչեք այն, իբրև բաղձալի օր։ Եթե տրն կծագի առանց արյունոտ ամպերի, է՛լ ավելի լավ...»։[1]

Իսկ Չերնիշևսկին, ասում է Լենինը, հարցն այլ կերպ էր դնում, նա գիտեր, որ ժողովրդի դատը վերևից լուծում չի ստանա, դրա համար անիծում էր ցարական ռեֆորմը, ցանկանում նրա տապալումը, որ Ռուսաստանը կանգներ դասակարգերի բացահայտ պայքարի ուղու վրա, այսինքն սկսվեր գյուղացիական ռևոլուցիան։[2]

Այսպիսով՝ Չերնիշևսկու համար գյուղացիության պահանջները բավարարելու, ճորտատիրությունը հիմնովին վերացնելու միայն մի ուղի կար—ռևոլուցիայի ուղին, իսկ Գերցենը, նրա նման նաև Նալբանդյանը, հույս ունեին, որ գուցե հնարավոր է այդ խնդրին լուծում տալ նաև վերևից և միայն այդ ուղու անհաջողության դեպքում էին անխուսափելի համարում, ինչպես Նալբանդյանն էր արտահայտվում, կացնի ուղին, ռևոլուցիայի ուղին։

Հենց այս վերջին էական հանգամանքն էլ, այսինքն ժողովրդական շահերի պաշտպան լինելը, ռևոլուցիայի ուղին ընդունելը, նրանց հիմնովին անջատում էր ամեն կարգի լիբերալներից, որոնք կալվածատիրական-բուրժուական շերտերի անունից էին հանդես գալիս և միմիայն վերևից շնորհած ռեֆորմի կողմակից էին ու ռևոլուցիայի վճռական հակառակորդ։

Մի հիմնական հանգամանքի վրա էլ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել։ Ինչպես Գերցենի նման՝ Նալբանդյանն էլ հողը ժողովրդին տալու հետ կապում էր ուտոպիստական-սոցիալիստական հույսեր և չէր ըմբռնում դրա բուրժուական կապիտալիստական էությունը։

«Հողը պատկանում է հասարակության, որի ամեն մի անդամ հավասար իրավունք ունի հավասար քանակության վերա հավիտյանս ժամանակների, և մի կողմից՝ վաճառելու իրավունք չունենալով, իսկ մյուս կողմից՝ առանց արգելքի հողը գործելու և արդյունավորելու իրավունքը անկողոպտելի պահելով, այդ հասարակության անդամը և նորա սերունդը հաստատում է յուր կյանքը մի ամուր և ապահով հիմքի վերա և անհնար է, որ նա կամ աղքատության հանդիպի կամ իսպառ կարոտ մնա»,—գրում էր Նալբանդյանը։

Այսպիսով, համայնական հողատիրության հիմքի վրա, ըստ Նալբանդյանի, հաստատվելու էր հողով ապահովված գյուղացու հավիտենական բարօրությունը...

Մենք արդեն տեսանք, որ Լենինը Գերցենի և ուրիշների օրինակով այդ մանր-բուրժուական ուտոպիայի իրական բովանդակությունը վաղուց արդեն բացահայտել է, ցույց տվել դրա բուրժուական-կապիտալիստական էությունը և այդ անվանել ամերիկական տիպի կապիտալիզմ գյուղատնտեսության մեջ։

Հետևաբար կարող ենք ասել, որ Նալբանդյանը հայ իրականության

---

[1] *Е. А. Моруховец*, Крестьянская реформа 1861 г., М., 1937, стр. 94—95.
[2] *Ленин*, Соч., т. I, стр. 179—180.
[3] Մ. Նալբանդյան, Երկերի ժողովածու, էջ 51.

մեջ գլխավորում էր այն ռևոլուցիոն-դեմոկրատական հոսանքը, որը, հակառակ բոլոր մյուս հայ հասարակական հոսանքների, հանդես գալով ցարական գյուղացիական ռեֆորմի դեմ, այսպես կոչված պրուսական ուղու դեմ, ըստ էության պաշտպանում էր գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացման ամերիկական ուղին, այսինքն ֆեոդալիզմի վերացման և ցարիզմի ապայման ռեոլուցիոն ուղին։